



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան
« 22 » 04 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N^o 048 - 24

Ձեռնարկողը՝

«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ
Քաղաք Երևան, Կիկյան 16

Գործունեությունը՝

Լանջաղբյուրի N1 ջրամբարի մոտեցնող ջրանցքի
վերակառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 048 - 24

« 22 » 04 2024թ.

Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուրի N1 ջրամբարի մոտեցնող ջրանցքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, Լանջաղբյուր բնակավայր

Ներածական մաս. «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» ՋՏ ԾԻՄ-ի պատվերով և «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» շրջանակներում, «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել Լանջաղբյուրի N1 ջրամբարի մոտեցնող ջրանցքի վերակառուցում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ջրանցքի վերականգնում, վերանորոգում և ընդլայնում:

Գործունեության ենթակա տարածքի հողերը ներկայացված են համայնքային սեփականություն հանդիսացող ջրային նպատակային նշանակության հողերով:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն «Լանջաղբյուրի N1 ջրամբարի մոտեցնող ջրանցքի» վերականգնման փոփոխված նախագծի, նախատեսվում է վերականգնել ջրանցքի 2.65կմ երկարությամբ հատվածը:

Նախագծով գործունեության ենթակա տարածքի մակերեսը կազմում է 3845ք.մ.:

Նախատեսվում է վերականգնել գլխային հանգույցը և վերակառուցել:



Գլխային հանգույցը բաղկացած է բետոնային ջրթափ պատվարից, դիսբերմից, լվացման մաքրիչ ջրանցքից, ջրընդունիչից, մոտեցնող ջրանցքից, տղմագտարանից:

Գլխամասային հանգույցի ուղղահատակի նիշը 2746.00 մ է: Հաշվարկային ելքը կազմում է 0.45 մ³/վ: Գրավիտացիոն տիպի բետոնային ջրթափ պատվարը տեղադրված է գետի հունի միջնամասում՝ ափերին ուղղահայաց, ունի 1.5 մ բարձրություն /վերին բիեֆ/ և 9.0 մ երկարությամբ ջրթափային ճակատ: Ջրթափի շենքի նիշը 2747.50 մ է: Ռիսբերման իրականացվում է քարալիցքից՝ անմիջապես ջրթափից հետո:

Լվացման մաքրիչ ջրանցքը ներկառուցված է գլխային հանգույցի ճակատում՝ հարակցվելով ջրթափային պատվարին ձախից, նախատեսված է ջրավազանի դատարկման, ինչպես նաև ջրընդունիչի և ձկնուղու մուտքի մոտ հավաքված հատակի ջրաբերուկների պարբերաբար լվացման-հեռացման համար: Լվացման մաքրիչ ջրանցքն իրենից ներկայացնում է ուղղանկյուն կտրվածքով, 1.0 մ ներքին լայնությամբ և 7.5 մ երկարությամբ երկաթբետոնե ջրանցք, որի մուտքամասում, ջրառի շենքի լվացումն ու վերին բյեֆի դատարկումն իրականացնելու համար, տեղակայված է խորքային սահող ԴՄ 1.0x1.0 տիպի փական:

Ջրընդունիչը տեղակայված է կառուցվածքների ձախ կողմում: Ունի 0.6 մ լայնությամբ բացվածք, շենքի նիշը 2747.10 մ է:

Մոտեցնող ջրանցքն ուղղանկյուն կտրվածքով 1.0մ ներքին լայնությամբ և 6.0մ երկարությամբ երկաթբետոնե կառուցվածք է: 0.2մ³/վ ելքի դեպքում ջրանցքում ջրի խորությունը կազմում է 0.32մ: Մոտեցնող ջրանցքի աջ պատին 1.5մ երկարությամբ կողային ավտոմատ ջրթափն է, որը նախատեսված է 0.2մ³/վ-ը գերազանցող ավելցուկային ելքը դեպի լվացման ջրանցք արտանետելու համար:

Պարզարանը ուղղանկյուն կտրվածքով երկաթբետոնյա կառուցվածք է, որն ունի մուտքի անցումային մաս՝ 1.5մ երկարությամբ, պարզարանային խուց՝ 7.6 մ երկարությամբ և 1.0 մ լայնությամբ: Պարզարանի ներքևի գլխամասում՝ աջ պատին, նախատեսված է 0.4-0.4 մ չափերով խորքային անցք՝ համապատասխան փականով (ԴՄ 0.4x0.4), որի օգնությամբ պարզարանում կուտակված բերվածքները հեռացվում են դեպի գետ:

Գլխամասային կառուցվածքի պատնեշի աջ կողմում նախատեսվել է աստիճանային տիպի ձկնուղի:

Բնապահպանական ելքերը պատվարի ուղղահատածքում տատանվում են 1÷8վ/լ ջրաքանակով:

Նախատեսվում է ջրանցքի վերականգնում համապատասխան նշահարման կետերում՝ ՆԿ0+00÷ՆԿ 26+50 հատվածում, փակ ստորգետնյա խողովակաշարով, որի սկզբնամասի հատվածի 11 մետրը մետաղական D400մմ խողովակներով, իսկ մնացած 2639մ-ը՝ PE100, D355մմ, PN0.8ՄՊա ճնշումով՝ պոլիէթիլենային ճնշումային խողովակաշարով: Պոլիէթիլենային խողովակաշարը նախագծված է ստորգետնյա՝ խրամուղու մեջ: Խրամուղու չափսերն են՝ b=0.7մ, H=1.5մ, m=0.25:

Խրամուղու վերին 20սմ հզորությամբ, 613մ³ ծավալով հողաբուսական շերտը նախատեսվում է ժամանակավոր պահեստավորել/պահպանել հրապարակում դրա համար նախատեսված վայրում՝ հետագայում տարածքի կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով: Հողաբուսաշերտի պահեստավորումն իրականացվելու է 2մ-ը չգերազանցող բարձրությամբ կոյտերի տեսքով և պաստառներով ծածկված վիճակում: Ջրատարի վերջնամասում ՆԿ 26+65 նախատեսված է բաց բետոնային հոր, որից հետո արկա ՊՔ-4 տիպի



երկաթբետոնյա վաքերով և հողային հունով ջուրը տեղափոխվում է դեպի Լանջաղբյուր N1 ջրամբարը:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի ջրամատակարարման համակարգերի տարածքներ նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհներով, իսկ շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շինարարական աշխատանքների անընդհատությունը:

Առանձին մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

Մինչև վերականգնման աշխատանքների սկսելն իրականացվում է բաժանարարների գոյություն ունեցող հողային հունի մաքրում բերվածքներից, կենցաղային աղբից և սառույցից:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի 3կմ հեռավորության վրա գտնվող հատկացված վայր:

Շինարարության և շահագործման փուլում առաջացած 170.0մ³ ծավալով կենցաղային աղբը աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր: Կենցաղային աղբի կուտակման համար շինարարական հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով:

Շինարարական աշխատանքների տևողությունը նախատեսված է 6 ամիս:

Խմելու և ջրցանի նպատակներով ջուրը բերվելու է ջրատար մեքենաներով Լանջաղբյուր բնակավայրից՝ պայմանագրային եղանակով և կուտակվելու է աշխատանքային հրապարակում նախատեսվող բաքերի մեջ:

Կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են անթափանց պատերով և հատակով բետոնային լցարանում /կեղտաջրերի հավաքման հոր/, որտեղից պարբերաբար հատուկ ասենիզացիոն մեքենաներով տեղափոխվելու է Վեոլիա ջուր ընկերության կողմից նշված մոտակա կոյուղու ցանց՝ պայմանագրային եղանակով:

Ըստ հայտում եղած տեղեկատվության գործունեության համար նախատեսված տարածքում << կարմիր գրքերում գրանցված տեսակներ չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Անհրաժեշտ է իրականացնել կանոնավոր ջրցան շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:

- Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար:

- Մեքենաների երթևեկությունն անհրաժեշտ է իրականացնել 30կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ՝ երթևեկությունից առաջացող արտանետումները կրճատելու նպատակով:

- Աղմուկ առաջացնող աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել օրվա ցերեկային ժամերին:



- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, որոնց սարքին լինելը պետք է ստուգվի ամեն օր՝ աշխատանքներն սկսելուց առաջ:
- Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով:
- Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:
- Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում ՀԳՇՆ, շինարարության կապալառու Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:
- Անհրաժեշտ է հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց խրամուղիների առկայությունը:
- Անհրաժեշտ է հնարավոր կեղտաջրերի/բետոնաջրերի հեռացման համար շինհրապարակում ունենալ կեղտաջրերի հեռացման տարա (≥3 մ 3) և նստեցումից հետո պարզեցված ջուրն օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոգեն զանգվածը՝ որպես շին աղբ հեռացնել աղբավայր:
- Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:
- Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:
- Նախքան շինհրապարակից հեռանալը շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով՝ (աշխատանքային տեղամասում կոպճային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ՝ համապատասխան արտահոսքի կանխման համակարգով):
- Անհրաժեշտ է իրականացնել արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների տեղադրում:
- Կանոնավոր կերպով (3 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուրի N1 ջրամբարի մոտեցնող ջրանցքի վերակառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լանջաղբյուր բնակավայրի վարչական շրջանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Կադաստրի կոմիտեն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:



Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
- Աշխատանքներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում, բացառելով տարածքում քսայուղերի և վառելանյութի պահեստավորումը:
- Շինաշխատանքների իրականացման ժամանակ պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրելի մակարդակը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուրի N1 ջրամբարի մոտեցնող ջրանցքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան

